ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան
1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 ,
hatsavan.kotayk@mta.gov.am

N 229
25 հոկտեմբեր 2019թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 46-Ա և հոկտեմբերի 23-ի թիվ 47-Ա որոշումները:
Առդիր՝ 2 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան
Հեռ./093-212366/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 46-Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման 7-րդ կետը՝

որոշում եմ

Հաստատել՝

1. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Կոտայքի մարզի Հացավան համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման գործողությունների պլանը՝համաձայն հավելված N 1-ի:
2. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Կոտայքի մարզի Հացավան համայնքի բնակչության պաշտպանության միջոցների կառավարման սխեման՝համաձայն հավելված N 2-ի:
3. Ուժեղ երկրաշարժերի դեպքում բժշկական ապահովման ուժերի հաշվարկ՝համաձայն հավելված N 3-ի:
4. 9 բալ և ուժեղ երկրաշարժերի դեպքում Հացավան համայնքին հասցված վնասների,փրկարարական և վթարավերականգնողական ուժերի և միջոցների հաշվարկ՝համաձայն հավելված N 4-ի:
5. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Հացավան համայնքի տարահանված բնակչության վրանային ավանի համար առաջին ապրանքներով ապահովման հաշվարկ՝համաձայն հավելված N 5-ի:
6. Ուժեղ երկրաշարժերի դեպքում Հացավան համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկ՝համաձայն հավելված N 6-ի:
7. Ուժեղ երկրաշարժերի դեպքում տուժածներին տրվող հագուստի և կոշիկների ապահովման հաշվարկ՝համաձայն հավելված N 7-ի:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 21
գ.Հացավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 47-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 38-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի,<<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով,հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2019թվականի հոկտեմբերի 21-ի N 217-Ա և Հացավան համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 18-ի N 33-Ա որոշումները՝

որոշում եմ

1. Կազմավորել համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովներ հետևյալ կազմով.

Սարգսյան Շավարշ - համայնքի ղեկավար,հանձնաժողովի նախագահ
Խաչատրյան Անուշավան - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Պետրոսյան Վարդան - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Սարգսյան Մխիթար - համայնքի ավագանու անդամ,հանձնաժողովի անդամ
Հակոբյան Ռազմիկ - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ
Գեղամյան Տիգրան - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ
Հակոբյան Արմեն - մարզպետարանի ներկայացուցիչ,հանձնաժողովի անդամ

2. Ալվարդ Խաչատրյանին՝20-օրյա ժամկետում հրավիրել համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգային նիստ:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2016թվականի նոյեմբերի 21-ի <<Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և համայնքի ղեկավարի 2012թվականի նոյեմբերի 29-ի N 30-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 38-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 23
գ.Հացավան